

**ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՍԱԿԱԳՆԵՐ**

Գործառնություն	Սակագին
Հաճախորդի խումբ	բանկում ընթացիկ հաշիվ ունեցող ֆիզիկական անձինք
Խնայողական հաշվի արժույթ (այսուհետ՝ Հաշիվ)	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի
Հաշվի բացում և սպասարկման վճար	անվճար
Հաշվի բացման/համալրման նվազագույն միավոր, Հաշվի նվազագույն մնացորդ, Հաշվով գործարքների նվազագույն չափ,	չի սահմանվում
Կանխիկ գումարի մուտքագրում Հաշվին	Համաձայն բանկային հաշվի համապատասխան սակագնային պլանի սակագների
Հաշվով հնարավոր գործառնությունների տեսակներ և սահմանափակումներ	<b>Հաշվի համալրում՝</b> <ul style="list-style-type: none"> <li>• կանխիկի մուտքագրում</li> <li>• այլ հաշիվներից փոխանցում</li> </ul>
	<b>Հաշվից ելքագրում՝</b> <ul style="list-style-type: none"> <li>• փոխանցում հաճախորդի ընթացիկ կամ քարտային հաշիվներին</li> </ul>
Խնայողական հաշվից փոխանցում նույն հաճախորդի այլ հաշիվներին	անվճար

<p>Տոկոսների հաշվարկման ձևը և հաճախականությունը</p>	<ul style="list-style-type: none"> <li>• տոկոսները հաշվարկվում են օրական՝ տվյալ օրվա Չաշվի մնացորդի նկատմամբ:</li> <li>• եթե տվյալ օրվա Չաշվի մնացորդը փոքր է 20,000 ՀՀ դրամ, 50 ԱՄՆ դոլար, 50 եվրոյից, 3,000 ՌԴ ռուբլուց, ապա այդ օրվա համար տոկոսներ չեն հաշվարկվում:</li> <li>• եթե տվյալ օրվա հաշվի մնացորդը գերազանցում է 130,000,000 ՀՀ դրամ, 250,000 ԱՄՆ դոլար, 250,000 եվրո, 20 մլն ՌԴ ռուբլուց, ապա այդ օրվա համար տոկոսը հաշվարկվում է 130,000,000 ՀՀ դրամ, 250,000 ԱՄՆ դոլար, 250,000 եվրոյի, 20 մլն ՌԴ ռուբլու նկատմամբ:</li> </ul>		
<p>Տոկոսների վճարումը</p>	<p>Չաշվարկված տոկոսները վճարվում են յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից հետո՝ հաջորդ ամսվա 1-ին (հունվարի 1-ին, ապրիլի 1-ին, հուլիսի 1-ին, հոկտեմբերի 1-ին) և գումարվում են հաշվի մնացորդին (կապիտալացվում են): Վճարման օրը ոչ աշխատանքային լինելու դեպքում տոկոսները վճարվում են վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Չաճախորդի կողմից կամ Բանկի նախաձեռնությամբ մինչև եռամսյակի ավարտը հաշիվը փակելու դեպքում տոկոսագումարներ չեն վճարվում:</p>		
<p>Տարեկան տոկոսադրույք</p>	<p>արժույթ</p>	<p>տարեկան անվանական տոկոսադրույք</p>	<p>տարեկան տոկոսային եկամտաբերություն</p>
	<p>ՀՀ դրամ</p>	<p>3.5%</p>	<p>3.55%</p>
	<p>ԱՄՆ դոլար</p>	<p>0.2%</p>	<p>0.2%</p>
	<p>Եվրո, ՌԴ ռուբլի</p>	<p>Բանկում «Ցպահանջ» ավանդի համար սահմանված</p>	<p>0.1%</p>

		տարեկան տոկոսադրույք		
<b>Տոկոսագումարի հաշվարկման օրինակ՝ (բերված օրինակում գումարները ներդրվում են 01.10.2020թ-ին, և ընթացքում չեն հանվում): Վճարվելիք տոկոսագումարից նվազեցվում է 10% եկամտային հարկ:</b>				
Ներդրված գումար (ՀՀ դրամ)	93-րդ օրը	183-րդ օրը	274-րդ օրը	366-րդ օրը
	3.5%	3.5%	3.5%	3.5%
100,000	100,794	101,577	102,375	103,187
500,000	503,970	507,884	511,873	515,937
1,000,000	1,007,940	1,015,769	1,023,746	1,031,874

### Ընդհանուր դրույթներ

1. Սույն Սակագները և «Ինեկոբանկ» ՓԲԸ Տնօրինության կողմից հաստատված «Բանկային սպասարկման հիմնական պայմաններ»-ը (այսուհետ՝ Հիմնական պայմաններ) միասին հանդիսանում են Ինեկոբանկ ՓԲԸ բանկային հաշվի ծառայության միասնական տեղեկատվական ամփոփագիր ֆիզիկական անձանց համար և հանդիսանում են «Բանկային ծառայությունների տրամադրման դիմում/պայմանագիր (ֆիզիկական անձ հաճախորդների համար)» փաստաթղթի անբաժանելի մասը: Օգտագործվող հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչ Հիմնական պայմաններում:
2. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել խնայողական հաշվի նկատմամբ հաշվարկվող տոկոսների չափը՝ նախապես հաճախորդին ծանուցելով այդ մասին փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 15 օր առաջ, եթե դիմում/պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
3. Խնայողական հաշիվը նախատեսված է գումար խնայելու և կուտակելու համար: Բանկն իրավունք ունի տոկոսներ չվճարել խնայողական հաշվի մնացորդի դիմաց, եթե տվյալ գումարը չի մնացել Բանկում հաճախորդի հաշվին առնվազն 24 ժամ: Այն դեպքում, երբ Հաճախորդն

օգտագործում է իսկայողական հաշիվը անբարեխղճորեն՝ նպատակային նշանակության պարբերաբար խախտմամբ, Բանկն իրավունք ունի չվճարել սույն ծառայության սակագներով նախատեսված տոկոսները, կամ միակողմանիորեն փակել Հաճախորդի Հաշիվը, այդ մասին ծանուցելով հաճախորդին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

4. Հաշիվները բացվում են անժամկետ:
5. Հաշվի քաղվածքի և քաղվածքի կրկնօրինակի տրամադրումն իրականացվում է համաձայն համապատասխան սակագնային պլանի/փաթեթի սակագների:
6. Սահմանափակումների բացակայության դեպքում Բանկային հաշիվները փակվում են անվճար:
7. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն: